

## **«Խոսպան», ռուսական ազդեցություններն ու անվտանգությունը**

Ջավախքի մասին խոսելիս չես կարող անտեսել այնպիսի հարցեր, ինչպիսիք են ռուսական ազդեցությունը կամ անվտանգությունը:

Ջավախքի բնակչության 60-65 տոկոսը փող վաստակում է Ռուսաստանի Դաշնությունում: Շատերը եկամտահարկ չեն վճարում, քանի որ ինքնազբաղված են համարվում, հազարավոր մարդիկ կորցրել են իրենց քաղաքացիությունը և դրա պատճառով չեն օգտվում որևէ ծառայությունից:

Մեզոնային աշխատանքային միգրացիան մեզ մոտ անվանում են **«Խոսպան»**: Ոչ ոք հաճույք չի ստանում Ռուսաստանի ցուրտ քաղաքներում թափառելուց, հանրակացարաններում ու նկուղներում ապրելուց, որպեսզի գոնե մի փոքր գումար վաստակի Ջավախքում մնացած իր ընտանիքի համար:

«Խոսպան» հասկացությունը դեռևս մնացել և պահպանվել է Խորհրդային Միության ժամանակներից: Ջավախքի բնակչության մի զգալի մասը սեզոնային միգրացիայի մեջ է և մեկնում է Ռուսաստան՝ աշխատանք փնտրելու: 1990-2008 թվականներին Ջավախքից Վրաստանի այլ շրջաններ և արտասահման (հիմնականում Ռուսաստան) գաղթել են 100 հազար տեղացիներ:

Սամցխե-Ջավախքի հայ բնակչությունը տարիների ընթացքում տնտեսապես ավելի է մոտեցել Ռուսաստանին: Այնտեղ հիմնականում ֆիզիկական աշխատանք են կատարում, աշխատում են շինարարական ընկերություններում, ամբողջ տարվա ընթացքում իրենց վաստակած գումարն ուղարկում այստեղ բնակվող իրենց ընտանիքներին: Նրանց վաստակած գումարը մինչև վերջին կոպեկը ծախսվում է Վրաստանում: Այս գումարով վճարում են կոմունալ վճարումները, ամեն ամիս նշված գումարով վճարում բանկից վերցված վարկը և այլն:

Ջավախքում մնացած «խոսպաններ» ընտանիքի անդամները զբաղվում են անասնապահությամբ կամ կարտոֆիլագործությամբ: Պատկերացրեք՝ գյուղատնտեսությամբ զբաղվողների մեծ մասը ամսական կամ օրական եկամուտ չունեն: Օրինակ՝ կարտոֆիլը ցանում է մայիսի սկզբին, 5-6 ամիս իրենց էներգիան ամբողջությամբ ծախսում են կարտոֆիլի խնամքի վրա՝ առանց եկամուտի, և եկամուտ են ստանում կարտոֆիլի բերքահավաքից: Այսպիսին է իրականությունը գրեթե բոլոր գյուղերում:

Ռուսաստանից կախվածությունը «ժառանգել» և «փոխանցվել» է Խորհրդային Միությունից: Ռուսաց լեզվի իմացությունը, Ջավախքի հայ բնակչության բավականին մեծ ներկայացվածությունը Ռուսաստանում և ազգակցական կապերը, այն փաստը, որ Ջավախքի բնակչությունը մեծամասամբ քայրուստի համար աշխատանք է փնտրում Ռուսաստանում, սա էլ ավելի է մեծացնում կախվածությունն այս երկրից:

Տարիների ընթացքում Ռուսաստանից Վրաստան մեծ գումարներ են փոխանցվել և փոխանցվում են: Կրկնեմ՝ այդ միջոցները մինչև վերջին կոպեկը ծախսվում են Վրաստանում:

Ջավախքի ուսանողները, ովքեր սովորում են Վրաստանի պետական բուհերի վճարովի հատվածում, տարեկան ուսման վարձը վճարում են Ռուսաստանում իրենց ծնողների կողմից վաստակած գումարով:

**Ի՞նչ է անում պետությունն այս պահին (այս իրավիճակը փոխելու համար):**

Ոչինչ:

Աշխատանքային միգրացիան՝ որպես մարտահրավեր, պետք է դառնա մեր երկրում կառավարության առաջնահերթ լուծելի խնդիրներից մեկը:

Կարևոր քայլ կլինի բարեկամ մյուս երկրների հետ երկկողմ պայմանագրեր կնքելու փորձը: Նաև՝ պայմանավորվածություններ տեղական ընկերությունների հետ՝ այս մարդկանց աշխատանքի տեղավորման առումով: Հասկանալի է, որ խնդրից ելնելով շատ դժվար է լինելու, բայց երկիրը կառավարող իշխանությունը պարտավոր է մտածել ու հոգ տանել իր քաղաքացիների մասին: Հակառակ դեպքում կպահպանվի կախվածությունը այն երկրից, որտեղից տվյալ ընտանիքը կարող է գումար վաստակել և հոգալ իր առօրյան կենցաղային պայմանները:

- **Խոստումներ...**

Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին արդեն 15 տարի է ինչ կառուցվում է . . .

Ախալքալաքի կայանի կառուցման ժամանակ նախատեսվում էր աշխատանքի տեղավորել 15 հազար տեղացի . . .

Ի վերջո, ոչ ոք կամ ոչ ավել, քան 50 մարդ աշխատանքի է ընդունվել ցածր վարձատրվող պաշտոններում սեզոնային աշխատանքի համար:

(Բնակչությունը երկաթուղում տեղացիների աշխատանքի չնդունելը կապում է նրանց ազգային պատկանելության հետ): Մինևույն ժամանակ տեղացիները մեծ հույսեր էին կապում երկաթուղու հետ: Ախալքալաքի կայանի կառուցումը կնպաստի նաև այլ տարածքների զարգացմանը: Օրինակ, Ջավախքում պետքա ծաղկում ապրեր հյուրանոցային և ռեստորանային բիզնեսը, թեև երկաթուղին մինչ այժմ նորմալ չի գործում: Ջավախքում բացի պետական ծառայությունից ու գյուղատնտեսությունից այլ աշխատատեղ չկա:

- **Կենտրոնական լրատվամիջոցներ սահմանափակ հասանելիություն**

Երկրորդ խնդիրը, որն ակտիվորեն քննարկվում է, տեղեկատվության աղբյուրների հասանելիությունն է: Ջավախքում տեղեկատվության հիմնական աղբյուրները ռուսական և հայկական հեռուստատեսությունն են: Վերջին տարիներին վրացական տեղական անկախ լրատվամիջոցները սկսել են Ջավախքի բնակչությանը հայերեն լեզվով տեղեկատվություն տրամադրել: Հանրային հեռարձակողի կայքը նույնպես հայերեն է տեղեկատվություն տարածում: Առաջին ալիքի «Մոամբեի» 21:00-ի հիմնական լրատվական թողարկումը միաժամանակ սինխրոն թարգմանվում է հայերեն և աղբբեջաներեն լեզուներով: Միայն

«մոամբե»-ի համաժամանակյա թարգմանությունը բավարար չէ, քանի որ ռուսական քարոզչական լրատվամիջոցները տարիներ շարունակ եղել են տարածաշրջանում տեղեկատվության կարևոր աղբյուրից մեկը:

Ռուսական լրատվական ալիքների դիտումը ուղղակիորեն կապված է լեզվական խոչընդոտի հետ:

Միննույն ժամանակ, եթե բնակչության համար կենսական նշանակություն ունեցող խնդիրները չեն լուսաբանվեն, եթե նա իրեն իր երկրի քաղաքացի չի զգում, որի հանդեպ հոգատարություն չկա, չեն մտածում և համատեղ իրենց ձայնը չի լսվում կենտրոնական ալիքներով, ապա ինչ զարմանալի չէ, բնակչությանը կհետաքրքրի լսել հեռուստալիքի որտեղ իր մասին ոչինչ չի խոսվում:

Ռուսական Առաջին ալիքը Ջավախքում հայտնի էր դեռ խորհրդային ժամանակներից: Խնդիրի լուծումը պարզ է - Հանրային հեռարձակողը պետք է ավելացնի փոքրամասնությունների հասկանալի լեզվով ամբողջ տարածաշրջանով հասանելի տեղեկատվության ծավալը և դիվերսիֆիկացնել այն: Ստեղծել համապատասխան մեդիա արտադրանք, ավելի հաճախ լուսաբանել շրջանում ապրող մարդկանց պատմությունը, մշակույթը և ապրելակերպը:

**Պատերազմ, աշխարհաքաղաքականություն և Ջավախք** - 2008-ի օգոստոսյան պատերազմը նույնքան ուժեղ հարված հասցրեց Ջավախքի բնակիչներին, որքան Վրաստանի ցանկացած այլ բնակչի: Բնակչության մեծ մասը դատապարտել է ռուսական ագրեսիան, թեև տարբեր կարծիքներ են եղել պատերազմի պատճառների մասին, եղել և մնում են մարդիկ, խմբեր, որոնք այլ կերպ են մտածում, բայց դրանք զանգվածային չեն և Ջավախքում բնակվող ոչ գերիշխող էթնիկ խմբերը Վրաստանի շահերից հեռու չեն:

2008 թվականին 13 տարեկան էի, շատ լավ հիշում եմ, որ պատերազմի ժամանակ Ջավախքցիները վաղահաս կարտոֆիլը հավաքում էին և ուղարկում պատեռազմի հետևանքով հարկադրաբար վերաբնակվածներին:

1828-29 թվականներին Ռուսաստանի և Օսմանական կայսրության միջև կնքված Ադրիանոպոլի խաղաղ պայմանագրով ռուսները հեռացան Օսմանյան կայսրության տարածքի մեծ մասից, որը գրավել էր ռազմական գործողությունների հետևանքով: Այդ իս պատճառով Հայերը կանգնած էին Օսմանյան կայսրության դեմ մենակ մնալու և ֆիզիկապես ոչնչացվելու վտանգի առաջ: Ուստի նրանք օգտվեցին Ադրիանոպոլիսի պայմանագրի այն հոդվածներից, որոնց համաձայն պատերազմող կողմերի բնակիչներին թույլատրվում էր ազատ տեղաշարժվել մի երկրից մյուսը և հանգամանորեն տեղի հայ բնակչության մի մասը տեղափոխվեց Ռուսական կայսրության պատկանող տարածք: (Կարսի, Էրզրումի և Բայազետի վիլայեթներ) գաղթացները բնակություն են հաստատել հիմնականում Սամցխե-Ջավախքում, «Ախալքալաքի գուբեռնայում/մարզում»: 1915 թվականի ապրիլի 24-ին Կոստանդնուպոլսում սկսվեցին հայերի զանգվածային ձերբակալություններն ու հալածանքները, որոնք տևեցին մինչև 1918 թվականի սեպտեմբեր: Երեք տարվա ընթացքում ավելի քան մեկ միլիոն հայ է սպանվել: Շատերը դիմեցին փախուստի Օսմանյան կայսրությունից և ցրվեցին աշխարհով մեկ: Պատմական իրադարձությունների պատճառով

Ջավախքի բնակչությունը հատուկ վերաբերմունք կամ վախ ունի Թուրքիայի նկատմամբ, ինչը տարիներ շարունակ բնորոշ է Վրաստանի այս տարածաշրջանին: Ռուսաստանը շատ լավ տեղեկացված է այս ամենի մասին: Միշտ օգտագործում է այս փաստը իր քարոզչական լրատվամիջոցների և փափուկ ուժի միջոցով տեղում ապակայունություն ստեղծելու համար: Հայոց ցեղասպանությունից անցել է 107 տարի, սակայն Ջավախքում ապրող ընտանիքի յուրաքանչյուր անդամ մինչ օրս հիշում են այդ պատմությունները: Ամեն տարի ապրիլի 24-ին Ջավախքում տեղի է ունենում երթ ` ի պատիվ գոհերի հիշատակի և ցեղասպանության ճանաչման պահանջի:

Մի խոսքով, ես կարող եմ շատ խոսել այս հարցի մասին, բայց իմ նպատակը ոչ թե արտաքին սպառնալիքների գնահատումն է, այլ հարցի վերաբերյալ իմ դիտարկումները կիսելը:

Ես ավելի շատ կենտրոնացած եմ պայքարելու և տարածաշրջանի նկատմամբ այս վերաբերմունքը փոխելու վրա:

Ավելի ռացիոնալ է խոսել ավանդական խնդիրների լուծման և այդ առումով առկա ռեսուրսների օգտագործման մասին, քան օգտագործել այս իրավիճակը լավ ծրագրեր շահելու համար, որտեղ այս տարածաշրջանը դիտվում է որպես սպառնալիք, և ծրագրերին միջամտելու անհրաժեշտությունը հեշտությամբ հիմնավորվում է: Տեղում գործող կազմակերպությունները խոսում են նույն համատեքստում ավելի քան 30 տարի: 90-ականների իրադարձությունները և թբիլիսյան նարատիվը դեռևս արդիական են: Կար ժամանակ, երբ Վրաստանի երրորդ նախագահն այցելեց Ջավախք և Ախալքալաքի կենտրոնում հավաքված մի քանի ակտիվիստների անվանեց անջատողական: Թբիլիսիում կարծում էին, որ ջավախքցիներն ինքնավարություն են պահանջում: Այսօր այս կարգախոսները/պատմումները մեզ/երիտասարդների համար անցյալում են, բայց այդ դիսկուրսները չեն անհետացել:

Ջավախքը լճերով ամենահարուստ շրջանն է: Այն նաև լեռնային շրջան է՝ հետաքրքիր կիկլոպյան շինություններով և տարբեր/բազմազան մշակույթ ունեցող մարդկանցով: Այս շրջանը և այստեղ ապրող մարդիկ անձանոթ են Վրաստանի շատ քաղաքացիների համար: Ջավախքը նույնպես Վրաստանի մի մասն է՝ տարբեր խնդիրներով, մշակույթով, լանդշաֆտով ու պատմությամբ: Համեցեք ցուրտ Ջավախք և ծանոթացեք այս տարբերվող տարածաշրջանին:

Իմ ծանոթներից մեկը միշտ կատակով ասում է « Մենք որ այստեղ ենք ապրում, պետությունը պետք է փոխհատուցում նշանակի, որովհետև տարվա 8 ամիսը ձմեռ է, իսկ պետությունը մեզ թողել է, մեր մասին ոչ ոք չի անհանգստանում»:

Բոլորը համաձայն են, որ տեղական խնդիրները կարող են լուծել միայն տեղական (և ոչ մի դեպքում հայկական կամ առավելևս ռուսական) կառավարությունները:

Խոսելով Ջավախքում ռուսական ազդեցության մասին՝ կան բազմաթիվ այլ խնդիրներ, որոնք էլ ավելի են խորացնում իրավիճակը: Հազարավոր մարդիկ մնացել են առանց քաղաքացիության, ինտեգրման, ռուսալեզու դպրոցներ, դպրոցներում ռուսաց լեզվի

ուսուցում, համայնքում միասնության կամ քննարկման մշակույթի բացակայություն, տարածաշրջանի վրա աշխարհաքաղաքական ազդեցություններ և այլն:

### **Տարածաշրջանը լքված է պետության կողմից**

Չկան աշխատատեղեր, չկան համապատասխան ենթակառուցվածքներ, չկան ժողովրդավարական գործընթացներ և չկա վստահություն մեր ժողովրդի նկատմամբ, որակյալ կրթություն ստանալը նույնպես շատ դժվար է:

Այսօր ես և շատ երիտասարդներ պայքարում ենք տարածաշրջանում առկա խնդիրների, այդ թվում՝ ռուսական քարոզչության ազդեցության նվազեցման դեմ: Մենք անում ենք այն ամենը, ինչ մեր ուժերի սահմաններում է:

Մեր ակտիվ երիտասարդության պայքարը նման է կրակով հրդեհի դեմ պայքարին: Հրդեհաշիջումը լայնածավալ հրդեհներից պաշտպանվելու մեթոդ է: Այս մեթոդով Ավստրալիայի անկյուններից մեկի բնակիչները պայքարում են լայնածավալ հրդեհների դեմ: Կազմակերպելով արհեստական/պլանավորված հրդեհներ, չնայած բարձր ջերմաստիճաններին, նրանք կարողացել են իրենց հողերի 65 տոկոսը պաշտպանել բնական հրդեհներից: Օգտագործելով այս մեթոդը, նրանք կարողացել են փրկել բազմաթիվ էնդեմիկ, վտանգված տեսակներ: Տեղաբնակների համար, հրդեհը ոչ միայն խնդիր է, այլև դրա դեմ պայքարելու միջոց:

Այսօր Ջավախքում շատ են նմանատիպ փոքր" պլանավորված " հրդեհները, որոնք փորձում են ամեն կերպ նվազեցնել Ռուսաստանի կողմից տարածվող ապատեղեկատվությունը, նրանք բարձրաձայն խոսում են այդ իրադարձությունների մասին և չեն վախենում դժվարություններից: Այսօր Ջավախքից շատ ուսանողներ սովորում են Թբիլիսիի տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում, շատ երիտասարդներ ծառայում են վրացական բանակում, և այդ երիտասարդները պատրաստ են պաշտպանել և զարգացնել Վրաստանը իրենց մասնագիտություններին համապատասխան: